ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» դեկտեմբերի 2012 թ. N __-Ա

ՈՐՈՇՈՒՄ

ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետի, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14^3-րդ հոդվածի 9-րդ և 12-րդ մասերի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 15-ի N 2330-Ն որոշումը.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի վարչական սահմաններում գտնվող մի շարք հողամասեր փոխադրել այլ նշանակության հողամասերի կատեգորիա՝ համաձայն հավելվածի:

2. Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման 1-ին կետով հողամասերի նպատակային նշանակության կատարված փոփոխության մասին 10-օրյա ժամկետում օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեին և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարությանը՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճենները:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևանի քաղաքապետարան են դիմել ՀՀ պաշտպանության նախարարությունը և ստորև նշված կազմակերպությունները՝ իրենց սեփականության իրավունքով պատկանող հողամասերի նպատակային նշանակությունը փոխելու խնդրանքով:

«Պրոգրես» ՓԲԸ-ի սեփականությունը հանդիսացող Նոր Նորք, Գյուրջյան 17 հասցեի արդյունաբերական նշանակության հողամասը գտնվում է բնակելի կառուցապատման գոտում:

«Վենեցիա Պլազա» ՍՊԸ-ի սեփականությունը հանդիսացող Ավան, Աճառյան 40/9 հասցեի արդյունաբերական նշանակության հողամասի հարևանությամբ գտնվող հողամասերը կառուցապատված են բնակելի և հասարակական նշանակության շինություններով և հանդիսանում են բնակավայրի կատեգորիայի հողամասեր:

«Հայկական բերքի առաջմղման կենտրոն» ՓԲԸ կողմից ՀՀ կառավարության 03.05.2012թ N 633-Ն որոշմամբ ձեռք բերված Նորագավիթ թաղամասին հարող տարածքի գյուղատնտեսական նշանակության հողամասում նախատեսվում է ջերմատների կառուցման և զարգացման ներդրումային ծրագրերի իրականացում: ՀՀ կառավարության նշված որոշման 3-րդ կետով Երևանի քաղաքապետին առաջարկվել է սահմանված կարգով ապահովել հողամասի նպատակային նշանակության փոփոխության իրականացումը:

Նշված կազմակերպությունների, ինչպես նաև ՀՀ պաշտպանության նախարարության հողամասերի նպատակային նշանակության փոփոխումը չի հակասում Երևան քաղաքի գլխավոր հատակագծին:

Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը հավանության է արժանացել քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 20.12.2012թ. նիստում և վերջինիս կողմից տրվել է դրական եզրակացություն:

Համաձայն «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14.3.-րդ հոդվածի 8-րդ կետի՝ «համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը և դրանց նախագծման առաջադրանքները համայնքի ղեկավարի ներկայացմամբ քննարկվում են միջգերատեսչական հանձնաժողովի նիստում և կարող են հաստատվել համայնքի ավագանու կողմից միայն միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացության առկայության դեպքում:

Առանց միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացության հաստատված քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը և (կամ) դրանց փոփոխություններն առ ոչինչ են:»:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Հողամասերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի ծախսերում փոփոխություններ չեն առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Հողամասերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հավելված
Երևան քաղաքի ավագանու
« » _____ 2012թ. N -Ա որոշման

Ց Ա Ն Կ

Երևան քաղաքում որոշ հողամասերի նպատակային նշանակության փոփոխության

N/N	Կառուցապատող	Հասցեն	Հողամասի մակերեսը /հեկտար/	Ներկայիս նպատակային նշանակությունը	Առաջարկվող նպատակային նշանակությունը	Ծանոթագրություն
1	2	3	4	5	6	7
1.	«Պրոգրես» ՓԲԸ	Նոր Նորք, Գյուրջյան N 17	0,828	արդյունաբերական	բնակավայր	բնակելի կառուցապատում
2.	«Վենեցիա Պլազա» ՍՊԸ	Ավան, Աճառյան N 40/9	1,47535	արդյունաբերական	բնակավայր	հյուրանոցային համալիրի կառուցում
3.	«Հայկական բերքի առաջմղման կենտրոն» ՓԲԸ	Նորագացիթ թաղամասին հարող տարածք	155,91	գյուղատնտեսական	արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլն	ջերմատների կառուցում, ՀՀ կառավարության 03.05.2012թ N633-Ն որոշում, կետ 3
4.	ՀՀ պաշտպանության նախարարություն	Նոր Նորք, Մառի, Գալշոյանի և Թևոսյան փող. հատված	1,6475	Հատուկ նշանակության	բնակավայր	